ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր Լ. Հ. ԲԱԲԱՅԱՆ

Ակադեմիկոս Հակոբ Համազասպի Մանանդյանը՝ հայագիտության փայլուն համաստեղության ներկայացուցիչներից մեկը, ծնվել է 1873 թ. նոյեմբերի 22-ին Ախալցխա քաղաքում։ 1893 թ. ավարտելով Թիֆլիսի առաջին դասական գիմնազիան, մեկնել է Գերմանիա բարձրագույն կրթություն ստանալու նպատակով։ Չորս տարի ուսումնառությունն անցկացնելով Իենայի, Լայպցիգի և Ստրասբուրգի համալսարաններում, աշակերտելով Եվրոպայի ժամանակի նշանավոր բանասերների, լեզվաբանների և պատմաբանների, Հ. Մանանդյանը 1897 թ. Իենայում պաշտպանում է դիսերտացիա և ստանում փիլիսոփայության դոկտորի աստիճան։ Դիսերտացիոն աշխատությունը նվիրված էր Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի ուսումնասիրությանը։ Բանասիրական բնույթի այդ աշխատությունը կրում է „Beiträge zur Albanischen Geschichte“ խորագիրը և նույն 1897 թ. հրատարակվել Լայպցիգում։ 1898 թ. Մանանդյանը Պետերբուրգի համալսարանի արևելագի-



տական լեզուների ֆակուլտետում էքստերն կարգով քննություն է հանձնում պարսից բանասիրության, լեզվի և պատմության գծով ու ստանում է առաջին կարգի դիպլոմ։ Ստանալով համակողմանի ու հիմնավոր կրթություն, տիրապետելով հին և նոր մի քանի լեզուների (գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, հին հունարեն, լատիներեն, հին պարսկերեն, զենդերեն, սանսկրիտ), Հ. Մանանդյանը 1898—1899 թթ. լինում է Լոնդոնի, Փարիզի, Բեռլինի և Վիեննայի գրադարաններում ու թանգարաններում, ծանոթանում իրեն հետաքրքրող նյութերին։

Զինված խոր ու բազմակողմանի գիտելիքներով, Հ. Մանանդյանը 1899 թ. վերջերին վերադառնում է Հայաստան։ 1900—1905 թթ. որպես ուսուցիչ պաշտոնավարում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ 1905 թ. Հ. Մանանդյանը տեղափոխվում է Թիֆլիս, շարունակում մանկավարժական աշխատանքը։ Նյութական սուղ պայմանները, սակայն, ստիպում են նրան նոր մասնագիտություն ձեռք բերել, և ահա նա որոշում է իրավաբան դառնալ։ 1909 թ. Յուրևի (Դորպատի) համալսարանի իրավաբանական ֆակուլտետում նա նորից էքստերն կարգով հանձնում է պահանջվող քննությունները և ստանում երդվյալ հավատարմատարի առաջին կարգի դիպլոմ։ 1909—1919 թթ. Հ. Մանանդյանը բնակվում է Բաքվում, ուր փաստաբանական աշխատանքին զուգընթաց զբաղվում է նաև մանկավարժական-գիտական և հասարակական գործունեությամբ։

1920 թ. սկզբներին Հ. Մանանդյանը տեղափոխվում է Հայաստան։ Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո 1920 թ. դեկտեմբերին նա գործուն մասնակցություն է ունենում Երևանի ժողովրդական համալսարանի ստեղծմանը, որպես նրա առաջին ռեկտոր, գլխավորում է այն մինչև նույն թվականի հոկտեմբեր ամիսը, հետո մինչև 1923 թ. հոկտեմբերը վարում է արևելագիտական ֆակուլտետի դեկանի պաշտոնը։ 1921—1931 թթ. Հ. Մանանդյանը համալսարանում դասախոսել է հայ ժողովրդի պատմություն։ 1931 թ. նա անցել է թոշակի և իրեն ամբողջովին նվիրել միայն գիտահետազոտական աշխատանքների։

1926 թ. Հ. Մանանդյանին շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում, 1935 թ.՝ ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում։ 1939 թ. Հ. Մանանդյանը ընտրվել է ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, իսկ 1943 թ.՝ ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ։ Բարձր գնահատելով Հ. Մանանդյանի գիտական-մանկավարժական և հասարակական (ՀՍՍՀ խորհուրդների IX արտակարգ համագումարի պատգամավոր, Երևանի քաղաքային սովետի դեպուտատ և այլն) գործունեությունը, սովետական կառավարությունը նրան պարգևատրել է «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով։ Ականավոր գիտնական Հ. Մանանդյանը իր մահկանացուն կնքեց 1952 թ. փետրվարի 4-ին, 79 տարեկան հասակում[1]։

* * *

Հ. Մանանդյանը հայ պատմաբանների հին սերնդի այն ներկայացուցիչներից էր, որ 1920-ական թթ. սկզբներին դաղափարական որոշակի շրջադարձ կատարեց և աշխատեց կանգնել պատմության մատերիալիստական ըմբռն-

1 Հ. Մանանդյանի կենսագրական տվյալները վերցրել ենք Գ. Սարգսյանի և Վ. Հակոբյանի՝ Հ. Մանանդյանին նվիրված հոդվածներից, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 2 և «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, № 3։

ման գիրքերի վրա։ Նա գիտական ասպարեզ էր մտել որպես բանասեր լայն առումով, ներառյալ աղբյուրագիտությունը և բնագրագիտությունը։ Գիտական գործունեության հենց սկզբից նա մեծ հետաքրքրություն էր ցուցաբերել հունաբան դպրոցի թարգմանությունների ուսումնասիրության նկատմամբ։ Այդ ուղղությամբ ծավալած բեղմնավոր գործունեության մեջ նրա գլուխ-գործոցը հանդիսացավ «Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները» կապիտալ աշխատությունը, որը լույս տեսավ Վիեննայում 1928 թ.։

Հ. Մանանդյանի բանասիրական ուսումնասիրությունները ընդհանուր առմամբ մեծ ներդրում են հանդիսանում ոչ միայն հայ, այլև ընդհանուր բանասիրության մեջ։ Սակայն անժխտելի է, որ ինչքան էլ նշանակալից ու խոշոր լինեն նրա այդ բնույթի ուսումնասիրությունները, այնուամենայնիվ, ավելի քան մեծ են ու բազմակողմանի ականավոր գիտնականի այն աշխատությունները, որոնք նվիրված են Հայաստանի և հայ ժողովրդի քաղաքական ու սոցիալ-տընտեսական պատմությանն ու նրա օժանդակ-հարակից ճյուղերին։

1930-ական թթ. կեսերից գիտնականը իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացրեց Հայաստանի հին և միջին դարերի քաղաքական պատմության ուսումնասիրության վրա։ Մեկը մյուսի ետևից հրապարակ եկան նրա կապիտալ աշխատությունները՝ նվիրված Հայաստանի և հայ ժողովրդի պատմության չհետազոտված կամ քիչ հետազոտված դարաշրջանների, իրադարձությունների, մութ ու բարդ պրոբլեմների և երևույթների լուսաբանմանը։

Հայկական և օտար աղբյուրների նկատմամբ կիրառած քննական ու համեմատական մեթոդը, նրանց մանրազնին ուսումնասիրությունը և հմտալից վերլուծությունը՝ մի կողմից, և մյուս կողմից՝ բազմակողմանի խոր գիտելիքները, հռոմեա-բյուզանդական և մերձավոր-արևելյան երկրների պատմության խոր իմացությունը հնարավորություն են տվել Հ. Մանանդյանին քողազերծ անելու հայ և օտարազգի մատենագիրների միտումնավոր նկարագրություններն ու մեկնաբանությունները, բացահայտելու դրանց պատճառները, միաժամանակ սահմանազատելու աղբյուրներում պահպանված նյութի իրականը վիպական-առասպելականից, նոր լույս սփռելու սկզբնաղբյուրների արժեքավորման, նրանց արժանահավատության ու հավաստիության հարցերի վրա։ Նման մոտեցումն էլ հենց հնարավորություն է ընձեռել գիտնական-պատմաբանին առաջին անգամ ստեղծելու Հայաստանի հին և միջին դարերի գիտական պատմությունը (սկսած մ. թ. ա. VI դարից մինչև մ. թ. XVI դարը)[2], այդ թվում շատ ավելի հանգամանորեն՝ արմենների, հայ ժողովրդի կազմավորման մեջ նրանց խաղացած դերի, հայ պետականության ստեղծման ու հզորացման, Տիգրան II-ի ժամանակաշրջանի, հայ-հռոմեական պատերազմների[3], II—III դարերի շատ կողմերով թերի ուսումնասիրված պատմությունը[4]։

Հ. Մանանդյանը առաջինն էր, որ գիտական հիմքերի վրա դրեց Հայաստանի XI—XV դարերի պատմության ուսումնասիրման գործը և տվեց սելջուկյան տիրապետության (XI—XII դդ.), Զաքարյանների ֆեոդալական ինքնավար իշխանության (XII—XIII դդ.), մոնղոլական և թուրքմենական տիրապետու-

---

2 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Երևան, 1944, հատ. Բ, մասն Ա, 1957, հատ. Գ, 1952։

3 «Տիգրան Բ և Հռոմը», Երևան, 1940։

4 «Քննական տեսություն», հատ. Բ, մասն Ա։

թյունների (XIII—XV դդ.) ժամանակաշրջանների չուսումնասիրված և միաժամանակ բավական բարդ պատմությունը։

Սկզբնաղբյուրների վկայությունների քննական ու համեմատական վերլուծության միջոցով Հ. Մանանդյանը, մերժելով նախորդ շրջանի մասնագետների երկերում տեղ գտած սխալ և անհիմն հարցադրումները, խորազնին աշխատանք կատարելով պարզել է առևտրական և ռազմական ճանապարհներին, քաղաքների նվաճումների տարեթվերին, քաղաքների ու նահանգների տեղադրությանը, բանակների թվերին ու կորուստներին առնչվող շատ ու շատ հարցեր, կատարել բազմաթիվ ճշտումներ և լրացումներ։

Հայ և եվրոպական պատմագրության մեջ թրակա-փռյուգական ծագում ունեցող արմենները վաղուց համարվել են հայ ժողովրդի կազմավորման պրոցեսի հիմնական բաղադրիչ տարրը։ Հ. Մանանդյանը ևս ժառանգեց այդ կոնցեպցիան։ 1940-ական թթ. սկզբներից, սակայն, այդ կարծիքը անընդունելի համարվեց։ 1960-ական թթ. սկզբներից վերանայվեց նաև այդ վերջին տեսակետը։ Լեզվական, հնագիտական, մշակութային նորագույն ուսումնասիրությունները հանգեցրին այն եզրակացության, որ հայ ժողովուրդը սկսել է կազմավորվել Հայկական լեռնաշխարհում դեռևս այն ժամանակաշրջանից, երբ այդ տարածքի վրա և նույնիսկ նրա շուրջը գոյություն չունեին հնդեվրոպական լեզուներով խոսող ցեղեր ու ժողովուրդներ։ Միաժամանակ, սակայն, շեշտվում է այն, որ լեզվի խնդրում մեծ ներդրում են արել մ. թ. ա. XIII դարի վերջին կամ XII դարի սկզբին (և ոչ մ. թ. ա. VII—VI դարերում, ինչպես կարծում էր Հ. Մանանդյանը) Փոքր Ասիայից Հայկական լեռնաշխարհ մուտք գործած հնդեվրոպական տարրերը. նրանց ցեղային լեզուներն են, որ Հայկական լեռնաշխարհում սկիզբ են դրել հայոց լեզվի ձևավորմանը[5]։ Ըստ այս նոր տեսության, արմենները հանդիսացել են հայ ժողովրդի կազմավորման պրոցեսի բաղադրիչ տարրերից մեկը։

Հանգամանորեն լուսաբանելով արմենների ներգաղթի ուղիները և նրանց հնագույն գաղթավայրերը, Հ. Մանանդյանը, սակայն, մի քանի անգամ շեշտում է, որ հայ ժողովրդի կազմավորման ընթացքում եկվոր արմենների հետ համաձուլվել են ոչ միայն ուրարտացիները, ինչպես սովորաբար ենթադրվել է, այլև Հայկական լեռնաշխարհի նախաուրարտական հնագույն ցեղերը և, գլխավորապես, Հայասայի ոչ հնդեվրոպական բնակիչները[6]։

Հենվելով Քսենոֆոնի վկայությունների վրա՝ Հ. Մանանդյանը առաջինը եզրակացրեց, որ հայերը պետականություն են ունեցել ավելի վաղ, քան ենթադրվում է[7]։ Վերջին տարիների ուսումնասիրությունները անվիճելիորեն հաստատեցին Հ. Մանանդյանի եզրակացության ճշտությունը, այն, որ իսկապես մ. թ. ա. VI դարի սկզբին արդեն ստեղծվել էր հայկական պետությունը ի դեմս Երվանդունիների թագավորության[8]։

Ուրվագծելով Հայկական լեռնաշխարհ մուտք գործելուց հետո արմենների պատմությունը, նրանց ներքին կյանքը, զբաղմունքը, ռազմական գործը, նրանց հարաբերությունները մեդական և պարսկական պետությունների հետ, պատմաբանը եզրակացնում է, որ հայերի հասարակարգի հիմքը Աքե-

5 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, Երևան, 1971, էջ 190։

6 «Քննական տեսություն», հատ. Ա, էջ 42։

7 Նույն տեղում, էջ 39—40։

8 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, էջ 439—440։

մենյան տիրապետության ժամանակ կազմում էր տոհմական կենցաղը, որի մեջ սկսվել էր արդեն որոշ բեկում[9]։

Միանգամայն ճիշտ նշելով, որ Ալեքսանդր Մակեդոնացու և Սելևկյանների տիրապետությունը Առաջավոր Ասիայի պատմության համար սկիզբ դարձավ տնտեսական ու կուլտուրական բուռն զարգացման ու արագ վերելքի, Հ. Մանանդյանը գտնում է, որ Առաջավոր Ասիայում տեղի ունեցած այդ բուռն իրադարձությունները Հայաստանի պատմության և նրա քաղաքական ու տնտեսական զարգացման համար նոր դարաշրջանի սկիզբն են հանդիսանում։ Սելևկյանների գերիշխանությունը, ըստ Հ. Մանանդյանի, հայկական երկրների վրա ավելի անվանական է եղել, քան իրական։

Բացահայտելով ու խիստ քննադատության ենթարկելով Հռոմի քաղաքականությունը Մերձավոր Արևելքի ժողովուրդների, այդ թվում հատկապես հայերի նկատմամբ, պատմաբանը անհանդուրժելի է համարում Հռոմի իդեալականացումը Եվրոպական պատմագրության կողմից։ Այդ կապակցությամբ նա նկատում է, որ չնայած Տիգրան II-ի դարաշրջանը քաղաքական ու սոցիալական ցնցումների ալեկոծ մի ժամանակաշրջան էր, երբ վճռական ու արմատական փոփոխության էր ենթարկվում ոչ միայն Հայաստանի, այլև Արևմտյան Ասիայի ճակատագիրը, սակայն այդ մեծ հեղաշրջումը և, մասնավորապես, այն պատմական անցքերը, որ տեղի էին ունեցել Հայաստանում, մեծ չափով խեղաթյուրված են պատմագիտական շատ երկերում[10]։ Եվ պատահական չէ, որ Հ. Մանանդյանի՝ Հայաստանի քաղաքական պատմության ուսումնասիրությանը նվիրված առաջին խոշոր մենագրությունը ընդգրկում է Տիգրան II-ի դարաշրջանը և կրում է «Տիգրան Բ և Հռոմը» խորագիրը։

Գիտնականը իրավացի է, երբ գտնում է, թե կտրականապես պետք է մերժել Եվրոպական պատմագիտության մեջ գերիշխող նաև այն տեսակետը, թե, ինչպես վերջին շրջանի պոնտական-հռոմեական, նույնպես և հայկական-հռոմեական կռիվները կարելի է բնորոշել իբրև բարբարոս Արևելքի ընդվզում ընդդեմ քաղաքակրթված Արևմուտքի։ Հ. Մանանդյանը ցույց է տալիս, որ Արևելքի կողոպտման նպատակով հռոմեական զորավարների մղած կռիվները ուղղված էին այն երկրների դեմ, որոնցում զարկ էր տրվում հելլենիստական կուլտուրային և առևտրի ու արդյունագործության զարգացմանը։

Հ. Մանանդյանը լուսաբանել է նաև Տիգրանից հետո ընկած ժամանակաշրջանի պատմությունը, զգալի չափով ամբողջացրել և ավելի գիտական հիմքերի վրա է դրել Հայաստանի II—III դարերի գրեթե չլուսաբանված, խառն ու բարդ ժամանակաշրջանի ուսումնասիրությունը։ Նա իրավացիորեն քննադատում է հայ պատմագրության մեջ Արշակունյաց թագավորության բնութագրման ավանդական սխալ տեսակետը, ըստ որի, այդ ժամանակաշրջանը համարվում է հայ ժողովրդի պատմական անցյալի ամենափառահեղ շրջանը։

Հ. Մանանդյանը մեծ ուշադրություն է դարձրել ժամանակագրության խնդիրների վրա և հասել է լուրջ արդյունքների։ Նա կատարել է Արշակունի թագավորների հաջորդականության, իշխած տարիների, արշավանքների, պատերազմների, դիվանագիտական բանակցությունների, հաշտության պայմանագրերի կնքման և շատ դեմքերի ու դեպքերի բազմաթիվ ժամանակագրական

9 «Քննական տեսություն», հատ. Ա, էջ 84։

10 Նույն տեղում, էջ 368։

ճշտումներ։ Ինչպես այդ ճշտումները, այնպես էլ հայ և օտար գրավոր ու վիմական աղբյուրներից բերված և առաջին անգամ նրա կողմից գիտական շրջանառության մեջ դրված պատմական փաստերը միանգամայն նոր լույս են սփռել այդ դարերի պատմության շատ մութ ու խճճված հարցերի վրա։ Դրանք հնարավորություն են տվել գիտնականին ավելի ճշգրիտ ու հիմնավոր տալու Արշակունյաց ժամանակաշրջանի Հայաստանի ներքին ու արտաքին բարդ իրադարձությունների, Իրանի և հռոմեական կայսրության՝ Հայաստանին տիրելու համար մղած դարավոր արյունահեղ ու աշխարհավեր պայքարի, Հայաստանի և հայ ժողովրդի կրած սարսափների ու արհավիրքների, միաժամանակ նրա մղած հարյուրամյակներ ընդգրկող հերոսամարտերի, սխրանքների ու վառ հայրենասիրության պատմությունը։

Ինչպես հայտնի է, վերահաս մահը թույլ չտվեց մեծանուն գիտնականին ծրագրած աշխատանքը լրիվ իրականացնել։ «Քննական տեսության» չիրականացված մասը ընդգրկում է Հայաստանի մարզպանության և արաբական տիրապետության ժամանակաշրջանները և Բագրատունյաց թագավորության պատմությունը։ Սակայն չնայած դրան, նա իր մի շարք աշխատություններում ավելի կամ պակաս չափով անդրադարձել է այդ դարաշրջանների քիչ ուսումնասիրված հարցերին և համառոտ ու ընդհանուր գծերով բնութագրել ու լուսաբանել պատմական կարևոր իրադարձությունները։

Հ. Մանանդյանի պատմագիտական վաստակը, ինչպես ասվեց, անգնահատելի է հատկապես Հայաստանի՝ քաղաքական իրադարձություններով հարուստ, միաժամանակ չուսումնասիրված ու մութ ժամանակաշրջանի (XI—XV դարեր) պատմության ուսումնասիրության ու լուսաբանման բնագավառում։ Ըստ Հ. Մանանդյանի, XI—XVI դարերի հայ ժողովրդի պատմությունն ունի առանձնահատուկ բնույթ և բովանդակություն։ Վերականգնման ջանքերի ու համառ պայքարի մի շրջան էր այդ, երբ հայ իշխանությունները փորձեր էին անում մաքառել ընդդեմ ծավալվող ու հաղթանակող սելջուկ-թուրքական, մոնղոլական ու թուրքմենական ցեղերի։ Այդ պայքարի կենտրոններն էին մի կողմից՝ բուն Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և հյուսիս-արևելյան շրջանները, մյուս կողմից՝ Ռուբինյան իշխանության տակ գտնվող Կիլիկիան[11], լուսաբանելով Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և արևելյան նահանգների՝ սելջուկյան ամիրայություններից ազատագրման պրոցեսը, գիտնականը, միանգամայն ճիշտ, շեշտում է Վրաստանի խաղացած դերը այդ գործում և հայ-վրացական դաշինքի ու համերաշխության նշանակությունը։

Հ. Մանանդյանը հայ և օտար աղբյուրների վկայությունների հիման վրա լուսաբանել է մոնղոլական արշավանքների, Հայաստանում նրանց դաժան տիրապետության ու ծանր հետևանքների պատմությունը։ Մոնղոլական հրոսակախմբերը,— գրում է նա,— որոնց միացել էին նաև թուրքական ցեղեր, ներխուժում էին Արևմտյան Ասիայի երկրները և ամեն ինչ մատնում սրի, հրի ու ավերածության, կոտորելով ամենուրեք հարյուր հազարավոր անմեղ բնակչություն[12]։

Հ. Մանանդյանը իրավացիորեն նկատում է, որ այն, ինչ Մարքսը իր «Գաղտնի դիպլոմատիայում» գրել է մոնղոլների քաղաքականության մասին

---

11 Նույն տեղում, հատ. Ի, էջ 7։

12 Նույն տեղում, էջ 179։

Ռուսաստանում, միանգամայն ճիշտ է նաև Հայաստանի և Վրաստանի վերաբերմամբ։ «Գրգռել իրար դեմ իշխաններին, պահպանել անմիաբանություններ նրանց մեջ, հավասարակշռել նրանց ուժերը և թույլ չտալ նրանց որևէ մեկին ուժեղանալու» —այս բոլորը մոնղոլ-թաթարների ավանդական քաղաքականությունն է եղել ոչ միայն Ռուսաստանում, այլ նաև Վրաստանում ու Հայաստանում[13]։

Աղբյուրների ընձեռած հնարավորությունների սահմաններում Հ. Մանանդյանը լուսաբանել է նաև Լանկթամուրի, ակ-կոյունլու և կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի տիրապետությունների ժամանակաշրջանների պատմությունը։ Նա գտնում է, որ նվաճած երկրներին Լանկթամուրի հասցրած վնասները այնքան ծանր էին, որ երկար դարեր մնացին անդարմանելի։ Գիտնականը, սակայն, նշում է, որ ավերածությունների, գաղթի ու թշվառության տխուր այս ժամանակներում ևս, երբ Հայաստանը գտնվում էր ամենասոսկալի վիճակում, հայ ժողովրդի մեջ կենդանի էր մնում նրա ստեղծագործական մեծ եռանդը։ XV դարի անասելի ծանր պայմաններում անգամ հայ միտքը շարունակում էր հարստացնել գիտությունն ու գրականությունը կարևոր նոր ստեղծագործություններով։

* * *

Հ. Մանանդյանի գիտական վաստակի մեջ ուրույն տեղ են գրավում հայ ժողովրդի պատմության սոցիալ-տնտեսական բնագավառին նվիրված գիտական ուսումնասիրությունները։

Գիտնականին շատ վաղուց է հետաքրքրել Հայաստանի ներքին կյանքի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմությունը։ Դեռևս 1902 թ. «Արարատ» հանդեսում հրատարակած «Մի դիտողություն հայոց ներքին կյանքի ուսումնասիրության վրա» խորագրով հոդվածում նա գրել է, որ հայ ժողովրդի պատմությունը գրելիս պետք է ուշադրություն դարձնել հին Հայաստանի ու հայերի ներքին պատմության կուլտուրական և սոցիալական կողմի վրա, որպեսզի ընդհանուր պատմական տեսության համար զտված ու ճշտված նյութ լինի մեր նախնիքների հասարակական, տնտեսական ու ընտանեկան կենցաղի վերաբերյալ։ Այլապես հայոց պատմությունը կմնա միշտ արտաքին անցքերի պատմագրական ժողովածու[14]։ Սակայն իրեն հետաքրքրող այդ բնագավառով Հ. Մանանդյանը կարողացավ զբաղվել միայն Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո։ Իր կենսագրականում նա հենց այդպես էլ գրել է. «Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո սովետական պատմաբանների առաջ դրվեցին նոր խնդիրներ, և ես, չբավարարվելով հին Հայաստանի արտաքին քաղաքական պատմության ուսումնասիրությամբ, իմ ուշադրությունը գերազանցապես կենտրոնացրի նրա սոցիալ-տնտեսական զարգացման վրա»[15]։

Եվ իսկապես, տասնյակ տարիների բեղմնավոր ու քրտնաջան աշխատանքով գիտնականը բացահայտեց ու լուսաբանեց Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի շատ բարդ, մութ, չուսումնասիրված ծալքերը և լուրջ արդյունքների հասավ։ Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պրոբլեմով Մանանդյանը հիմնականում զբաղվել է 1920—1930-ական թթ.։ Նա

13 Նույն տեղում, էջ 251։

14 Տե՛ս Վ. Հակոբյանի վերը նշված հոդվածը («Բանբեր», 1970, № 3)։

15 Նույն տեղում։

առաջինն էր, որ հատուկ ուսումնասիրություն նվիրեց Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի նյութական բարիքներ արտադրող դասակարգի՝ շինականների իրավիճակի ուսումնասիրությանը։ «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում» հոդվածում, որը լույս է տեսել 1925 թ., քննարկված են երկրի ներքին կյանքին վերաբերող նաև այլ հարցեր ու հասկացություններ։ 1926 թ. հրատարակվեց նրա «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում» հոդվածը։ Հաջորդ երկու տարում երկու պրակով լույս տեսավ «Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության» ուսումնասիրությունը։ Ի վերջո, 1934 թ. հրատարակվեց նրա Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի պատմությանը նվիրված ամբողջական, ընդհանրացնող ուսումնասիրությունը՝ «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» (Արշակունիների և մարզպանության շրջան) խորագրով։ Պատմաբանը իրեն հատուկ վարպետությամբ հայ և օտար աղբյուրների փաստական հարուստ նյութի հիման վրա առաջին անգամ հանգամանորեն ուսումնասիրեց Հայաստանի ֆեոդալական-նախարարական կարգն ու կենցաղը, ֆեոդալական հարաբերություններն ու նվիրապետությունը, հայկական ֆեոդալական հասարակության առանձնահատկությունները, ազգարարային հարաբերությունները, հողատիրության ձևերը, ֆեոդալական ռենտան ու հարկերը, հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքը, ֆեոդալական շահագործման ձևերը, գյուղացիության ճորտացման ընթացքը, ստրկական աշխատանքի կիրառումը, տվեց սոցիալ-տնտեսական, վարչա-քաղաքական ու իրավական կյանքին վերաբերող շատ տերմինների վերծանումը։ Հայաստանի ներքին կյանքի ուսումնասիրության մարզին են վերաբերում նաև Հ. Մանանդյանի առևտրի և քաղաքների մասին կատարած հետազոտությունները։

Հ. Մանանդյանը անդրադարձավ նաև գյուղական համայնքի խնդրին հին Հայաստանում։ Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի ամենահիմնական պրոբլեմներից է ստրկության և ստրկատիրության խնդիրը։ Որոշ չափով հակված լինելով Հին Արևելքի երկրներում «հավերժ» ֆեոդալիզմ տեսնելու կոնցեպցիային, Հ. Մանանդյանը ժխտեց ստրկատիրական սոցիալ-տնտեսական ֆորմացիայի առկայությունը Հայաստանում։ Նշելով, որ ստրկությունը համատարած ու ընդհանուր երևույթ էր հին աշխարհում, և հին Հայաստանը բացառություն չէր կարող կազմել, ինչպես պնդում են ոմանք, Հ. Մանանդյանը ընդգծում է, որ «ընդունելով ստրկության գոյությունը նախարարական Հայաստանում՝ չպետք է, իհարկե, նրա նշանակությունը գերագնահատել և համարել ստրկական աշխատանքը հիմնական ու առաջնակարգ ազդակ Հայաստանի տնտեսական զարգացման»[16]։ «Նախարարական Հայաստանի տնտեսության հիմքը կիսազատ շինականն էր և ոչ ստրուկը, որի տնտեսական դերը պետք է համարել երկրորդական»[17]։ Ստրուկների աշխատանքից օգտվել են գլխավորապես ընտանիքներում, և ստրկությունը Հայաստանում նահապետական բնույթ է կրել։

Ստրկատիրության՝ իբրև ֆորմացիայի առկայությունը Հայաստանում ժխտելու տեսակետը Հ. Մանանդյանն ավելի հանգամանորեն շարադրել է իր ռուսերեն հոդվածներից մեկում՝ նվիրված Արշակունիներից առաջ Հայաստանի

16 «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում», Երևան, 1934, էջ 239։
17 Նույն տեղում։

հասարակարգի պրոբլեմին[18]։ Այնտեղ նա միանգամայն որոշակի շեշտում է, որ Քսենոֆոնի շրջանի տոհմատիրական կարգերից անցումը տեղի է ունեցել ոչ թե դեպի ստրկատիրական կարգերը, այլ՝ Արշակունյաց շրջանի նախարարական-ֆեոդալական կարգերը։

Հիմնականում ելակետ ունենալով ֆեոդալիզմի ծագման մասին Ն. Ադոնցի կոնցեպցիան, բայց որոշ հշտումներ ու լրացումներ կատարելով դրանում, Հ. Մանանդյանը նույնպես գտնում է, որ Հայաստանի պայմաններում ֆեոդալական հասարակական-տնտեսական կացութաձևը առաջացել է տոհմատիրական հարաբերությունների քայքայման հողի վրա և որ տոհմատիրական հասարակության քայքայման հիմնական պատճառները եղել են արտաքին գործոնները։

Ըստ Հ. Մանանդյանի՝ ֆեոդալիզմի զարգացումն Արևելքում և Արևմտյան Եվրոպայում տեղի է ունեցել միանգամայն տարբեր պայմաններում։ Արևմտյան Եվրոպայում ֆեոդալիզմն առաջ էր եկել Հռոմեական կայսրության անկումից հետո, իբրև հետևանք նախկին պետական կազմակերպության քայքայման, իսկ Արևելքում նա հետզհետե զարգացել էր տոհմային կյանքի կազմալուծման և կերպարանափոխման ընթացքում։ Հ. Մանանդյանը գտնում է, որ նախարարական կազմակերպությունը, կառուցված լինելով կերպարանափոխվող տոհմային կյանքի հիմքերի վրա, բնականաբար, իր մեջ պահպանած պիտի լիներ տոհմային կարգերի բազմաթիվ մնացորդները[19]։

Ըստ Հ. Մանանդյանի, ֆեոդալիզմը ապրել է երեք շրջան՝ 1) նախնական ֆեոդալիզմ, 2) զարգացած ֆեոդալիզմ և 3) քայքայվող ֆեոդալիզմ[20]։ Հայաստանի ֆեոդալական հասարակարգի վերոհիշյալ հաջորդականությունը և բաժանումը Հ. Մանանդյանը կապակցում է քաղաքների տնտեսական ու առևտրա-դրամային հարաբերությունների զարգացման, ավելի փոքր չափով՝ սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած արմատական տեղաշարժերի, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման հետ։ Նրա կարծիքով, Բագրատունյաց տիրապետության պատմաշրջանի Հայաստանի տնտեսական կյանքը վերակառուցվում է քաղաքների արագ բարգավաճման, առևտրի, արհեստների ու արդյունագործության մեծ զարգացման, ինչպես և հարուստ ու ազդեցիկ հայ առևտրական ու բուրժուականացող դասակարգի աստիճանական զորեղացման հիման վրա։ Այդ երևույթները Հայաստանում ևս հետզհետե նպաստելու էին տնտեսական, սոցիալական ու քաղաքական նոր հարաբերությունների առաջացմանը, և միանգամայն հնարավոր է, որ այստեղ ևս ֆեոդալիզմը կքայքայվեր ներքուստ, եթե Բագրատունյաց Հայաստանի զարգացման այս ընթացքը չընդհատվեր սելջուկյան արշավանքների հետևանքով[21]։ Նա կարծում է, որ հասարակական կյանքն այստեղ ևս կարող էր վերակառուցվել առաջադեմ նոր հիմքերի վրա, ինչպես այդ հինգ դար հետո տեղի ունեցավ Արևմտյան Եվրոպայում[22]։

---

18 «Проблема общественного строя доаршакидской Армении», ІІЗ, 1945, № 5.

19 «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում», էջ 306։

20 Նույն տեղում, էջ 304։

21 Նույն տեղում, էջ 226։

22 «Քննական տեսություն», հատ. Բ, մասն Բ, էջ 385—386։

Ինչպես շատ պրոբլեմների, այնպես և քաղաքների ու քաղաքային կյանքի պրոբլեմի գիտական ուսումնասիրության հիմքը հայ պատմագրության մեջ դրել է Հ. Մանանդյանը, 1930 թ. իր հրատարակած և 1954 թ. վերահրատարակված (վերամշակված ու լրացված) «О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен» աշխատության մեջ և այլ հետազոտություններում։ Նա հանգամանորեն լուսաբանել է Հայաստանի քաղաքների պատմությունը, նրանց խաղացած դերը համաշխարհային առևտրի մեջ։ Նշված աշխատության մեջ, սկսած հնագույն ժամանակներից (մ. թ. ա. V դ.—մ. թ. XV դ.), ցույց են տրված երկրի քաղաքային կենտրոնները, նրանց առևտրական կապերը հարևան ու հեռավոր երկրների հետ, խաղացած կարևոր դերը Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող տարանցիկ առևտրի գործում։ Տրված են Հայաստանով անցնող միջազգային առևտրական տարանցիկ ուղիները և նրանց դերը հին աշխարհի առևտրի մեջ։ Փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց են տրված Հայաստանում ապրանքա-դրամային շրջանառության աճը, արտադրության այն ճյուղերը, որոնք զարգանում են առևտրի աշխուժացման ու զարգացման շնորհիվ, արտահանվող ու ներմուծվող ապրանքները։ Հանգամանորեն լուսաբանված են պատմական տարբեր շրջաններում երկրի քաղաքների տնտեսական վերելքը և այն պայմանավորող գործոնները։ Բացահայտված են քաղաքների, քաղաքային կյանքի անկման ու քայքայման պատճառները և շատ այլ հարցեր։

Քաղաքներին ու տարանցիկ առևտրին վերաբերող որոշ հարցեր, սակայն, Հ. Մանանդյանի կողմից միակողմանիորեն են լուսաբանվել. երկրի տնտեսական զարգացումը, քաղաքների առաջացումն ու անկումը, արհեստների զարգացումը բացատրվել են հիմնականում ոչ թե արտադրողական ուժերի աճով ու զարգացումով, այլ միջազգային տարանցիկ առևտրի զարգացմամբ։

Հ. Մանանդյանը առանձին ջանասիրությամբ ձեռնամուխ եղավ նաև Հայաստանի և հարևան երկրների պատմական աշխարհագրության[23], չափագիտության[24], էպիգրաֆիկայի[25] իրեն հուզող հարցերի հետազոտությանը։

---

23 «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի», Երևան, 1936։ «Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի պրոբլեմների մասին», Երևան, 1944։ «Պատմա-աշխարհագրական մանր հետազոտություններ», Երևան, 1945։ «Круговой путь Помпея в Закавказье», 1939, № 4, էջ 70—82; «Маршруты понтийского похода Помпея и путь отступления Митридата в Колхиду», «ВДИ», 1940, № 3—4, էջ 89—100; «Цель и направления подготовляющегося Нероном Кавказского похода», «Вопросы истории», 1946, № 7, էջ 66—74; «О местонахождении маршрутов персидских походов императора Ираклия», «Исторические записки», հատ. 25, 1948, էջ 50—70; «О некоторых спорных проблемах истории и географии древней Армении», «Византийский временник», т. 3, 1950, էջ 130—153։

24 «Չափերն ու կշիռները հնագույն հայ աղբյուրներում», Երևան, 1930։ «О градусных измерениях меридиана и земной поверхности по древнеармянским источникам», «ВДИ», 1950, № 2։ «Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, I պրակ, Երևան, 1927, II պրակ, Երևան, 1928։ «Римско-византийские хлебные меры и основанные на них индексы хлебных цен», «Византийский временник», հատ. 2 (27), 1948, էջ 60—73; «Էրատոսթենեսի ստադիոնը և պարսից ասպարեզը», Երևան, 1934։ «Средневековый итинерарий в армянской рукописи X столетия», АН СССР, XLV, Академику Н. Я. Марру, М.—Л., 1935, էջ 723—728։

25 «Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ», Երևան, 1946։ «Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական սաճարի կառուցման ժամա-

Պատմության այդ օժանդակ ճյուղերի լուսաբանությունը կարևոր էր՝ կապված երկրի սնտեսության, առևտրի, քաղաքական պատմության, ռազմական ճանապարհների ուսումնասիրության հետ։ Նշված ճյուղերի գծով գիտնականի ծավալած հետազոտություններից շատերը պրոբլեմների լուծման խորությամբ ու քննարկման լայն մասշտաբներով առաջինն են հայագիտության մեջ, և նրանց լուծման գիտական նշանակությունը դուրս է գալիս հայագիտության շրջանակներից։

Ակադեմիկոս Հ. Մանանդյանի գիտական դիմապատկերն ամբողջացնելու համար հաշվի պետք է առնել նաև նրա արդյունավետ գործունեությունը որպես բնագրագետ՝ իմաստասիրական բովանդակությամբ մի շարք թարգմանական երկերի ուսումնասիրող և հրատարակիչ։ Նրա ջանքերով են հրատարակվել, մասնավորապես, Նոնոսի, Հերմես Եռամեծի և Թևոն Աղեքսանդրացու մեծ հետաքրքրություն ներկայացնող աշխատությունների հին հայկական թարգմանությունները՝ գիտական օրինակելի սկզբունքներով։

Ինչպես տեսնում ենք, անգնահատելի են ականավոր պատմաբանի ծառայություններն ու ավանդը հայ ժողովրդի հին ու միջին դարերի պատմության, բանասիրության, աղբյուրագիտության, բնագրագիտության, չափագիտության, վիմագրության, պատմական աշխարհագրության ուսումնասիրման ու լուսաբանման գործում։ Նրա ծավալած բազմակողմանի, բեղմնավոր գիտական գործունեության շնորհիվ հայ ժողովրդի բազմադարյան պատմության ուսումնասիրությունը դրվեց գիտական ամուր հիմքերի վրա։

Պատմության և նրա օժանդակ ճյուղերի շատ պրոբլեմների խոր ու բազմակողմանի վերլուծության հետ միասին Հ. Մանանդյանի կողմից ներգրավված ու մշակված է հայ և օտար աղբյուրներում պահպանված փաստական հսկայական նյութ։ Բազմաթիվ պատմական փաստեր իրենց գիտական նոր լուսաբանումն են ստացել նրա երկերում։

Քաղաքական պատմությունը մեծանուն գիտնականը տալիս է ժամանակի Առաջավոր Ասիայի ու Արևմուտքի երկրների պատմության ընդհանուր ֆոնի վրա, սերտորեն առնչված նրանց պատմության հետ, վեր է հանում օտար տիրապետողների դեմ դարեր շարունակ մարտնչող հայ ժողովրդի ազատագրական ոգին, աշխարհակալ պետությունների և Արևմուտքի երկրների ագրեսիվ նպատակների էությունը, դրանց իրականացման նպատակով ծավալած ռազմա-դիվանագիտական նենգ քաղաքականությունն ու գործունեությունը։

Ականավոր պատմաբանի կապիտալ աշխատությունները՝ նվիրված հին և միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրությանը, սովետահայ պատմագիտության զարգացման կարևոր ու անհրաժեշտ փուլերից են հանդիսանում։ Նրա գրչին պատկանող գրեթե բոլոր գործերը հարուստ են փաստական հսկայական նյութի հիման վրա կատարված տեսական հարցերի գիտական ընդհանրացումներով։ Իրենց այդ նշանակությամբ նրանք դուրս են գալիս ազգային պատմության շրջանակներից և մեծ արժեք են ներկայացնում հին աշխարհի, Առաջավոր Ասիայի երկրների և հատկապես Անդրկովկասի ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար։

նակը», Երևան, 1946, «Новые заметки о греческой надписи в языческом храме Гарни». ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1951, № 4, էջ 9—35։

АКАДЕМИК ЯКОВ МАНАНДЯН

(К 100-летию со дня рождения)

Доктор историч. наук Л. О. БАБАЯН

(Р е з ю м е)

Огромна научно-исследовательская работа, проделанная академиком Яковом Амазасповичем Манандяном по изучению и освещению политической и социально-экономической истории Армении.

Своими капитальными работами Я. А. Манандян поставил на твердую научную основу изучение истории армянского народа. Он сосредоточил свое внимание главным образом на неизученных или слабо изученных проблемах и эпохах и достиг неоспоримых и серьезных результатов. Капитальные работы маститого ученого, посвященные изучению древней и средневековой истории Армении, ознаменовали важный этап развития армянской советской исторической науки. Почти все работы Манандяна содержат научные обобщения теоретических вопросов, сделанные на основе богатого фактического материала. По своему значению они выходят за рамки армянской истории и представляют большую ценность в изучении истории древнего мира, стран Передней Азии и особенно народов Закавказья.